ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-04
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 15 հուլիսի, 2024թ.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Դավիթ Գասպարյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԳԵՅԹ ՆԵԹՎՈՐՔ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Հովհաննես Դաշտոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 01.03.2024թ ««11009 Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 366-Ա և 11.06.2024թ. «Մրցութային հանձնաժողովի որոշումը հաստատելու և դրամաշնորհի պայմանագրի նախագիծ ներկայացնելու մասին» թիվ 1106-Ա հրամանը, «Գեյթ նեթուորք» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5-րդ կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել գումարից 4,999,000 (չորս միլիոն ինը հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ (ներառյալ՝ հարկերը):

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար չրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում ստանալու վճարել իրեն հասանելիք գումարը պայմանագրի 5-րդ կետում սահմանված կարգով և ժամկետներում.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների ուսումնասիրության համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան և առանձնացված հաշվառում:

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով նախարարություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե և հատուցել կողմի պատճառած վնասները՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.9 Դրամաշնորհի շրջանակներում ստացված դրամական միջոցները բացել առանձնացված բանկային հաշվի (հաշվեհամարի) միջոցով:

2.4.10 Ապահովել ակտիվ մասնակցություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից «Գաղափարի փուլ» դրամաշնորհային մրցույթի հաղթող ընկերությունների համար նախաձեռնված և իրականացվող ինկուբացիոն բնույթի կրթական դասընթացներին:

2.4.11 Պայմանագրի կամ փուլի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել Կազմակերպության գրավոր առաջարկի առկայության դեպքում: Ընդ որում առաջարկը պիտի ներկայացվի պայմանագրի կամ տվյալ փուլի ժամկետը լրանալուց առնվազն 10 օրացուցային օր առաջ:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու շեղումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը նշանակալի կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձևանմուշը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձևանմուշներ» ենթաբաժնում) նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կազմում,

հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Նախարարությունը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարից 2,900,000 թվերով (երկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամը, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է կազմակերպության բանկային հաշվին՝ որպես միջոցառումներով մինչև 2024 թվականի ավարտ նախատեսվող աշխատանքների կանխավճար, իսկ 849,250 (ութ հարյուր քառասունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ որպես միջոցառումներով 2025 թվականին նախատեսվող աշխատանքների կանխավճար փոխանցում է մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը: 5.1 կետում նշված կանխավճարների հանրագումարը կազմում է պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 75 տոկոսը:

5.2 Մնացած գումարը՝ պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 25 տոկոսը, 1,249,750 (մեկ միլիոն երկու հարյուր քառասունինը հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամը, փոխանցվում է կազմակերպության հաշվին՝ սույն պայմանագրով սահմանված ամփոփիչ հաշվետվություններն ընդունելուց, նախարարության և կազմակերպության միջև պայմանագրի արդյունքն ընդունելու վերաբերյալ հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ծրագրի շրջանակում հաղթող ճանաչված կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն ավարտել մինչև ոչ ուշ, քան 2025 թվականի դեկտեմբերի 25-ը:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5 Նախարարության կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել որևէ դեպքում նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ www.hti.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«ԳՆՅԹ ՆԵՐՈՒԺ ՐԲ» ՍՊԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,	ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 11-րդ հարկ,
ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկորանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011039444	Հ/Հ 20528222935910001
ՀԿՀՀ 02565518	ՀԿՀՀ 08257133
Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Պապայան	Տնօրեն՝ Հովհաննես Դաշտոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-04 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
անվանումը	Նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (<< դրամ)
Կայքի դոմեյնի և հոսթինգի ընտրություն	www.gait.network կայքի դոմեյնը արդեն իսկ ձեռք է բերված: Տվյալ դոմեյնը հետագայում նույնպես օգտագործելու համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի վճարումներ, ինչպես նաև կայքի արդյունավետ աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ է ընտրել կայքի հոսթինգի որակյալ ծառայություն մատուցող և վճարել դրա համար:	www.gait.network կայքի դոմեյնի և հոսթինգի ծառայությունների ընտրություն՝ հաշվի առնելով գին-որակ հարաբերակցությունը, ինչպես նաև այդ ծառայությունների համար վճարման իրականացում:	Կայքի գործող դոմեյն՝իր հոսթինգով: Իրականացված վճարում մեկ կամ երկու տարվա համար:	10.10.2024	23.10.2024	60,000
Քայլքի խանգարումների տվյալների բազայի ստեղծում	Քայլքի հետազոտության լաբորատորիայում հետազոտված բուժառուների դասակարգում ըստ ախտորոշման: Ախտորոշման հիմքում ընկած կինեմատիկ և կինետիկ գրաֆիկների, ինչպես նաև կլինիկական զննման	Վնասվածքաբան բժիշկների ներգրավմամբ բուժառուների քայլքի ախտորոշումների խմբավորում և դասակարգում:	500 բուժառուի քայլքի ախտորոշումների տվյալների դասակարգված բազա:	10.12.2024	24.12.2024	2,000,000

	աղյուսակային տվյալների վերլուծություն և համադրում:					
Մեքենայական ուսուցման ալգորիթմի մշակում և վեբ-կայքի բարելավում	500 բուժառուի քայլքի ախտորոշումների տվյալների դասակարգված բազայի հիման վրա ստատիստիկ վերլուծություն, որի հիման վրա իրականացվելու է մեքենայական ուսուցման համապատասխան ալգորիթմի ընտրություն և փորձարկում: Նախատեսվում է իրականացնել ալգորիթմի նախնական ինտեգրում www.gait.network վեբ-կայքում:	Ստատիստիկ վերլուծության և մեքենայական ուսուցման մասնագետների հետ խորհրդատվության հիման վրա մշակել քայլքի ախտորոշման տվյալների (գրաֆիկներ, աղյուսակներ) ավտոմատացված մեկնաբանման ալգորիթմ, ինչպես նաև իրականացնել մեքենայական ուսուցման փորձնական մշակում՝ բուժառուների մեծաթիվ տվյալների ներմուծման հետագա հեռանկարով: Նախատեսվում է քայլքի ախտորոշման տվյալների ավտոմատացված մեկնաբանման ալգորիթմի փորձնական ինտեգրում www.gait.network վեբ-կայքում:	500 բուժառուի քայլքի ախտորոշումների տվյալների դասակարգված բազայի ստատիստիկ վերլուծություն և մշակված ալգորիթմ՝ ծրագրավորման գործիքների կիրառմամբ: Ալգորիթմի նախնական ինտեգրում www.gait.network վեբ-կայքում:	10.12.2024	24.12.2024	330,000
				30.06.2025	14.07.2025	1,590,000
Անձնակազմի կառավարման, հաշվապահական և այլ խորհրդատվական ծառայությունների արտապատվիրում	ԳԵՅԹ ՆԵԹՈՒՈՐՔ ՍՊԸ-ի անձնակազմի կառավարման, հաշվապահական ծառայությունների և ֆինանսական հաշվետվությունների իրականացում «Ինստիգեյթ Խորհրդատվական» ընկերության կողմից:	Ծառայության արտապատվիրում և վճարում Ինստիգեյթ Խորհրդատվական ընկերությանը:	Ֆինանսական հաշվետվությունների կազմում և ըստ պահանջվող ժամանակացույցի ուղարկում պատկան մարմիններին, ինչպես նաև աշխատավարձերի և այլ ծախսերի հաշվետվողական	10.12.2024	24.12.2024	510,000
				30.06.2025	14.07.2025	509,000

			վճարում հասցեատերերին:			
Ընդամենը՝ 5,000,000 ՀՀ դրամ						

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՏՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գևորգյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«ԳԵՅԹ ՆԵԹՈՒՈՐՔ» ՍՊԸ

ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 11-րդ հարկ,
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822299591001
ՀՎՀՀ 08257133
Տնօրեն՝ Հովհաննես Դաշտոյան

(ստորագրություն)

Հավելված 2
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-04 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի արյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր բարտուղար՝ Դավիթ Գասպարյան	«ԳԵՅԹ ՆԵԹՈՒՈՐՔ» ՍՊԸ ք. Երևան, Հ. Հակոբյան 3, Ի-րդ հարկ, «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ 2052822299591001 ՀՎՀՀ 08257133 Տնօրեն՝ Հովհաննես Դաշտոյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 3
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՍ-2024/01-04 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Միջոցառման												
			Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	99999999	Դրամաշնորհային ծրագիր						2,900,000	2,900,000	2,900,000	2,900,000	2,900,000	2,900,000	2,900,000	2,900,000

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Գայիթ Դանիելյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«ԳԵՅԹ ՆԵԹՈՒՈՐՔ» ՍՊԸ

ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 11-րդ հարկ,
«Ինեկորանկ» ՓԲԸ
Հ/Հ 20528222995910001
ՀՎՀՀ 08257133
Տնօրեն՝ Հովհաննես Դաշտոյան

(ստորագրություն)

Հավելված 4
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՀ՝-2024/01-04 պայմանագրի

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան	«ԳԵՅԹ ՆԵԹՈՒՐՔ» ՍՊԸ ք. Երևան, Հ. Հակոբյան 3, II-րդ հարկ, «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ 2052822299591001 ՀՎՀՀ 08257133 Տնօրեն՝ Հովհաննես Դաշտոյան
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ Անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝_____
Նախարարությունը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականաց ված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	Արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	Փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 5
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-04 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Քայլքի կլինիկական հետազոտությունն օգտագործվում է մասնագիտացված հիվանդանոցներում՝ քայլքի խանգարումներ (gait disorders) ունեցող բուժառուների ճշգրիտ ախտորոշման և բուժման մարտավարության (treatment plan) մշակելու նպատակով: Քայլքի խանգարումների բուժումը ժամանակակից բժշկությունում հնարավոր չէ պատկերացնել առանց վերոնշյալ հետազոտության: Վերջինիս արդյունքների վերլուծությունն իրականացվում է մի շարք աղբյուրներից ստացված տարատեսակ տեղեկությունների հիման վրա (ստատիկ կլինիկական հետազոտության տվյալներ, կինետիկ, կինեմատիկ, էլեկտրոմիոգրաֆիայի գծապատկերներ և այլն): Այդ բոլոր տվյալների վերլուծությունն իրականացվում է բժիշկների խմբի կողմից (սովորաբար 4 և ավելի հոգի)՝ ամենշաբաթյա ժողով-քննարկումների ընթացքում, որոնք ոչ միայն ժամանակատար են, այլև առկա է մարդկային գործոնով պայմանավորված սխալ կամ բացթողում անելու որոշակի հավանականություն: Վերջինս կարող է հանգեցնել բուժման մարտավարության շրջանակում ոչ օբյեկտիվ որոշումների: Այս ամենից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ քայլքի հետազոտության տվյալների վերլուծությունն ավտոմատացնելու պահանջարկը մեծ է ողջ աշխարհում:

Քայլքի հետազոտության համար անհրաժեշտ բոլոր չափումների տվյալները ներկայացվում են թվային տեսքով, ինչը թույլ է տալիս ստատիստիկ վերլուծության և ծրագրավորման գործիքների կիրառմամբ միմյանց հետ համեմատել փոխկապակցված տարբեր մարդաչափական տվյալներ, ինչպես նաև, հաշվի առնելով քայլվածքի նորմատիվ արժեքների միջակայքը, գնահատել հետազոտվող բուժառուի քայլվածքի՝ նորմայից շեղման չափը: Ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս մշակել համացանցային հարթակ (web-platform), որի մեջ կարող ենք ինտեգրել քայլքի ախտորոշման տվյալների ավտոմատ վերլուծության ալգորիթմ: Նման առցանց գործիք կիրառելու պարագայում աշխարհի տարբեր ծայրերում գտնվող առողջապահության ոլորտի մասնագետները հնարավորություն կստանան ոչ միայն կրճատել ժամանակատար ժողով-երի տևողությունը, այլև նվազագույնի հասցնել մարդկային սխալանքի հավանականությունը: Ծրագրային ապահովումը թույլ կտա ցույց տալ չափված տվյալների շեղումը նորմայից, կապակցել ինֆորմացիայի մեկ տիպը մյուսի հետ և արդյունքում ներկայացնել նախնական եզրակացություն, որն իր մեջ կներառի ոչ միայն հիվանդի քայլքի խնդիրները, այլև նույնիսկ բուժման տարբերակների առաջարկները:

Վերևում նկարագրված ալգորիթմի հիման վրա ապագայում նախատեսում ենք իրականացնել տվյալների դասակարգում մեքենայական ուսուցման և մշակում արհեստական բանականության միջոցով, ինչը կգտնի առկա տվյալների միջև բազմազան կապեր գտնելուն, բժշկական միջամտությունների համար առավել ճշգրիտ առաջարկներ ներկայացնելուն, ինչպես նաև բժիշկների կայացրած որոշումներում վերանայումներ և շտկումներ անելուն: Հայտնաբերված կապերը նոր հնարավորություններ և նույնիսկ դեռ անհայտ խորքեր կարող են բացել, քանի որ մեքենայական ուսուցումը ներկայում զարգանում է հսկայական արագությամբ:

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀԿՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Գայանե Գասպարյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«ԳԵՅԹ ՆԵԹՈՒՈՐՔ» ՍՊԸ

ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 11-րդ հարկ,
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205282229995001
ՀԿՀՀ 08257133
Տնօրեն՝ Հովհաննես Դաշտոյան

(ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան « » հուլի.., 2024թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Դ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Նախարարություն», մի կողմից «ԳԵՅԹ ՆԵԹՈՒՈՐՔ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Հովհաննես Դաշտոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ Համաձայնագիր, հետևյալի մասին.

2024թվականի ապրիլի 14-ին հայտարարված ԲՏԱՆ-ԴՄ-2024/01 ծածկագրով մրցույթի հրավերին կից պայմանագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Նախարարությունը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարից 2,900,000 թվերով (երկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամը, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, փոխանցում է կազմակերպության բանկային հաշվին՝ որպես միջոցառումներով մինչև 2024 թվականին նախատեսվող աշխատանքների կանխավճար, իսկ 849,250 (ութ հարյուր քառասունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ որպես միջոցառումներով 2025 թվականին նախատեսվող աշխատանքների կանխավճար, փոխանցում է մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը: 5.1 կետում նշված կանխավճարների հանրագումարը կազմում է պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 75 տոկոսը:

5.2 Մնացած գումարը՝ պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 25 տոկոսը. 1,249,750 (մեկ միլիոն երկու հարյուր քառասունինը հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամը, փոխանցվում է կազմակերպության հաշվին՝ սույն պայմանագրով սահմանված ամփոփիչ հաշվետվություններն ընդունելուց, նախարարության և կազմակերպության միջև պայմանագրի արդյունքն ընդունելու վերաբերյալ հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ծրագրի շրջանակում հաղթող ճանաչված կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն ավարտել մինչև ոչ ուշ, քան 2025 թվականի դեկտեմբերի 25-ը:

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«ԳԵՅԹ ՆԵԹՈՒՈՐՔ» ՍՊԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,	ք. Երևան, Հ. Հակոբյան 3, II-րդ հարկ,
ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկորանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011039444	Հ/Հ 20528222395910 01
ՀԿՀՀ 02555518	ՀԿՀՀ 08257133
Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան	Տնօրեն՝ Հովհաննես Դաշտոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)